

Տեղեկանք

Բանջարեղենի շրջանառության ոլորտի լուրիկ, վարունգ, սոխ և կարտոֆիլ ապրանքային շուկաների ուսումնասիրության վերաբերյալ

Նպատակ ունենալով գնհատելու առկա մրցակցային իրավիճակը Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) նախաձեռնել և իրականացրել է բանջարեղենի շրջանառության ոլորտի (լուրիկ, վարունգ, սոխ, կարտոֆիլ) ապրանքային շուկաների ուսումնասիրություն

1. Ուսումնասիրության մեթոդաբանությունը.

Հանձնաժողովը բանջարեղենի վերոնշյալ տեսակների ներմուծմամբ, տեղական արտադրությամբ և իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին նույնականացնելու նպատակով դիմել է ԱՀ Ֆինանսների և գյուղատնտեսության նախարարություններին:

Հաշվի առնելով, որ նշված նախարարություններից ստացած տեղեկատվության համաձայն հնարավոր չի եղել պարզել առանձին սուբյեկտների արտադրության և իրացման ծավալները բաժնի կողմից նախաձեռնվել է նշված տեղեկատվության հավաքագրում ԱՀ շրջաններում:

Ստացված տվյալների ամփոփման արդյունքում առանձնացվել են բանջարեղենի յուրաքանչյուր տեսակների ներմուծմամբ, արտադրությամբ և իրացմամբ զբաղվող խոշոր, միջին և մանր սուբյեկտները, որոնցից էլ պահանջվել է 2018 թվականի ընթացքում իրականացրած գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն:

Բացի այդ, Հանձնաժողովը բանջարեղենի նշված տեսակների արտադրությամբ և իրացմամբ զբաղվող սուբյեկտների շրջանում իրականացրել է հարցումներ, որի նպատակն է եղել պարզել ոլորտում տիրող մրցակցային իրավիճակը, առկա խնդիրները և մրցակցության զարգացմանը խոչընդոտող երևույթները:

Տվյալ ոլորտի վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար օգտագործվել են նաև ԱՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տվյալները:

2. Բանջարեղենի շրջանառության ոլորտի (լուրիկ, վարունգ, սոխ, կարտոֆիլ) ապրանքային շուկաների ուսումնասիրությունը ընդհանուր նկարագիրը.

Ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով վերլուծությունը իրականացվել է 2018 թվականի տվյալների հիման վրա:

Ուսումնասիրության աշխարհագրական տարածքը ընդգրկել է Արցախի Հանրապետության ամբողջ տարածքը, քանի որ նշված տարածքում գործող տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրվող բանջարեղենի տեղափոխումը և իրացումը այդ տարածքում հնարավոր է առանց սահամանափակումների պահպանելով բանջարեղենի որակական հատկանիշները:

Ապրանքատեսակային սահմանը համարվել է Արցախի Հանրապետությունում իրացվող համապատասխան բանջարեղենի ամբողջ տեսականին, քանի որ այդ տեսականիների մեջ


ընդգրկված տեսակները ֆունկցիոնալ առումով փոխադարձ փոխարինելի են և համադրելի՝ ըստ ֆիզիկական և կիրառական բնորոշիչների:

2.1 Լուլիկ ապրանքային շուկայի կառուցվածքը.

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են տնտեսավարող սուբյեկտների իրացման տեսակարար կշիռները 2018 թվականին ներմուծված, արտադրված և իրացված լուլիկի ընդհանուր ծավալի մեջ: Մասնավորապես՝ համաձայն ձեռք բերված տվյալների և իրականացրած վերլուծությունների նշված ժամանակահատվածում թվով 239 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 2843.7 տոննա լուլիկ, որը կազմում է ոլորտի 54.3 տոկոսը: Մնացած 45.7 տոկոսը կամ 2391,3 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից (տես գծանկար 1):

Գծանկար 1

Լուլիկի ներմուծման և տեղական արտադրության ծավալները



Համաձայն իրականացրած ուսումնասիրության՝ լուլիկի ներմուծման և իրացման առավել մեծ մասնաբաժին ունեն Ներսիսյան Ռոզա, Հովսեփյան Վահրամ և Ավանեսյան Ալբերտ անհատ ձեռներեցները: Վերջիններիս ներմուծման մասնաբաժինները կազմում է համապատասխանաբար 14.5, 7.9 և 5.6 տոկոս:


Համաձայն Արցախի Հանրապետության շրջաններից հավաքագրած տեղեկությունների՝ ոլորտի արտադրության ծավալի կառուցվածքում 82.1 տոկոսը բաժին է հասնում դաշտային պայմաններում արտադրված լուլիկը իսկ 17.9 տոկոսը՝ ջերմոցային տնտեսությունների արտադրածը:

Դիտարկվել է նաև ոլորտի արտադրության կառուցվածքը ըստ շրջանների: Լուլիկի արտադրության կառուցվածքում ընդգծված առաջատար է Քաշաթաղի շրջանը՝ մասնաբաժինը կազմել է 64 տոկոս (տես գծանկար 2):

Գծանկար 2

Լուլիկի տեղական արտադրության կառուցվածքը ըստ շրջանների

տոննա



Արցախի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ներմուծված և գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված լուլիկի ծավալները ընդունվել են որպես իրացում, որի ընդհանուր ծավալը կազմել է 5 235 տոննա լուլիկ:

Լուլիկի շրջանառության ոլորտի իրացման կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ լուլիկի իրացման ոլորտի կեսից ավելին բաժին է հասնում ներմուծող տնտեսավարող սուբյեկտներին (տես աղյուցակ 1):

Աղյուսակ 1

Դիտարկված առաջատար 10 ընկերությունների իրացման ծավալները

Դ/Դ	Սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Մասնաբաժին (%)
1	Ներսիսյան Ռոզա Գերասիմի	412,8	7,9
2	Հովսեփյան Վահրամ	226,0	4,3
3	Ավանեսյան Ալբերտ Սերգեյի	159,8	3,1
4	«ՁՈՅԱ-ԼՈՒԻՉԱ» ՍՊԸ	83,7	1,6
5	Ջավադյան Գեղամ Յուրիի	83,5	1,6
6	ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	75,6	1,4
7	Հայրիյան Կարեն Սլավիկի	74,1	1,4
8	Հովհաննիսյան Հովիկ Վալերիի	68,0	1,3
9	Պետրոսյան Արսեն Վիտալի	65,0	1,2
10	Ավանեսյան Ռուդիկ Սոկրատի	63,6	1,2
11	Ընդամենը ներմուծող 10 սուբյեկտ	1312,1	25,1
12	Ընդամենը ներմուծող 239 սուբյեկտ	2842,6	54,3
13	Գյուղացիական տնտեսություններ	2392,4	45,7
14	Ընդամենը իրացման ծավալ ԱՀ	5235,0	100,0

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն Ներսիսյան Ռոզա՝ 7.9 տոկոս, Հովսեփյան Վահրամ՝ 4.3 տոկոս և Ավանեսյան Ալբերտ՝ 3.1 տոկոս, անհատ ձեռներեցները, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 15.3 տոկոսը: Իսկ եթե

այս սուբյեկտների մասնաբաժինը դիտարկենք միայն ներմուծման և իրացման լուրջի ծավալի մեջ, ապա վերջիններիս միասնական մասնաբաժինը ներմուծման մեջ կկազմի 28 տոկոս:


Այսիքն, լուրջի շրջանառության ոլորտը ունի ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

2.2 Վարունգ ապրանքային շուկայի կառուցվածքը.

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են տնտեսավարող սուբյեկտների իրացման տեսակարար կշիռները 2018 թվականին ներմուծված, արտադրված և իրացված լուրջի ընդհանուր ծավալի մեջ: Մասնավորապես՝ համաձայն ձեռք բերված տվյալների նշված ժամանակահատվածում թվով 227 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 1770.7 տոննա վարունգ, որը կազմում է ոլորտի 73.8 տոկոսը: Մնացած 26.2 տոկոսը կամ 629.3 տոննա արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից (տես գծանկար 3):

Գծանկար 3

Վարունգի ներմուծման և տեղական արտադրության ծավալները




Համաձայն իրականացրած ուսումնասիրության՝ վարունգի ներմուծման և իրացման առավել մեծ մասնաբաժին ունեն Ներսիսյան Ռոզա, Ավանեսյան Ալբերտ և Հովսեփյան Վահրամ անհատ ձեռներեցները: Վերջիններիս ներմուծման մասնաբաժինները կազմում է համապատասխանաբար 11.5, 8.5 և 7.5 տոկոս:

Համաձայն Արցախի Հանրապետության շրջաններից հավաքագրած տեղեկությունների՝ ոլորտի արտադրության ծավալի կառուցվածքում 82.4 տոկոսը բաժին է հասնում դաշտային պայմաններում արտադրված վարունգը իսկ 17.6 տոկոսը՝ ջերմոցային տնտեսությունների արտադրածը:

Ըստ շրջանների վարունգի արտադրության կառուցվածքում առաջատար են Քաշաթաղի շրջանը՝ 31.7 տոկոս և Ասկերանի շրջանը՝ 25.3 տոկոս (տես գծանկար 4):

Գծանկար 4

Վարունգի տեղական արտադրության կառուցվածքը ըստ շրջանների



Արցախի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ներմուծված և արտադրված վարունգի ծավալները ընդունվել են որպես իրացում, որի ընդհանուր ծավալը կազմել է 2400 տոննա վարունգ:

Վարունգի շրջանառության ոլորտի իրացման կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ վարունգի իրացման ոլորտում էական դերակատարություն ունեն ներմուծող տնտեսավարող սուբյեկտները (տես աղյուցակ 2)

Աղյուսակ 2

Դիտարկված առաջատար 10 ընկերությունների իրացման ծավալները

Դ/Դ	Սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Մասնաբաժին (%)
1	Ներսիսյան Ռոզա Գերասիմի	202,9	8,5
2	Ավանեսյան Ալբերտ Սերգեյի	150,5	6,3
3	Հովսեփյան Վահրամ	133,4	5,6
4	«ԶՈՅԱ-ԼՈՒԻՉԱ» ՍՊԸ	77,8	3,2
5	ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ	62,1	2,6
6	Սարգսյան Հովիկ Յակովի	61,5	2,6
7	Ջավադյան Գեղամ Յուրիի	52,7	2,2
8	Հովհաննիսյան Հովիկ Վալերիի	50,9	2,1
9	Լալայան Սասուն Վազգենի	46,2	1,9
10	Պետրոսյան Արսեն Վիտալի	43,8	1,8
11	Ընդամենը ներմուծող 10 սուբյեկտ	881,8	36,7
12	Ընդամենը ներմուծող 227 սուբյեկտ	1770,7	73,8
13	Գյուղացիական տնտեսություններ	629,3	26,2
14	Ընդամենը իրացման ծավալ ԱՀ	2400,0	100,0

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն Ներսիսյան Ռոզա՝ 8.5 տոկոս, Ավանեսյան Ալբերտ՝ 6.3 տոկոս և Հովսեփյան Վահրամ՝ 5.6 տոկոս, անհատ ձեռներեցները, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 20.4 տոկոսը: Իսկ եթե այս սուբյեկտների մասնաբաժինը դիտարկենք միայն ներմուծված և իրացված վարունգի

ծավալի մեջ, ապա վերջիններիս միասնական մասնաբաժինը ներմուծման մեջ կկազմի 27.5 տոկոս:


Այսիքն, վարունգի շրջանառության ոլորտը նույնպես ունի ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

2.3 Սոխ ապրանքային շուկայի կառուցվածքը.

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են տնտեսավարող սուբյեկտների իրացման տեսակարար կշիռները 2018 թվականին ներմուծված, արտադրված և իրացված սոխի ընդհանուր ծավալի մեջ: Մասնավորապես՝ համաձայն ձեռք բերված տվյալների նշված ժամանակահատվածում թվով 203 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 189.5 տոննա սոխ, որը կազմում է ոլորտի 3.5 տոկոսը: Մնացած 96.5 տոկոսը կամ 5292.6 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից (տես աղյուսակ 5):

Գծանկար 5

Սոխի ներմուծման և տեղական արտադրության ծավալները




Համաձայն իրականացրած ուսումնասիրության՝ սոխի ներմուծման և իրացման առավել մեծ մասնաբաժին ունեն Հայրիյան Կարեն, Սարգսյան Հովիկ և Ներսիսյան Ռոզա անհատ ձեռներեցները: Վերջիններիս ներմուծման մասնաբաժինները կազմում է համապատասխանաբար 6.6, 6.0 և 5.9 տոկոս:

Դիտարկենք ոլորտի արտադրության կառուցվածքը ըստ շրջանների: Սոխի արտադրության կառուցվածքում ընդգծված առաջատար է Ասկերանի շրջանը՝ մասնաբաժինը կազմել է 85.6 տոկոս (տես գծանկար 6):

Գծանկար 6

Սոխի տեղական արտադրության կառուցվածքը ըստ շրջանների

տոննա



Հանձնաժողովի կողմից ձեռք բերված տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի ընթացքում Արցախի Հանրապետությունում իրացվել է 2250 տոննա և արտահանվել 3 232.1 տոննա սոխ:

Սոխի շրջանառության ոլորտի իրացման կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ սոխի իրացման ոլորտի գրեթե ամբողջությամբ բաժին է հասնում գյուղացիական տնտեսություններին, իսկ ներմուծող սուբյեկտների մասնաբաժինները չնչին են (տես աղյուցակ 3):

Աղյուսակ 3

Դիտարկված առաջատար 10 ընկերությունների իրացման ծավալները

Դ/Գ	Սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Մասնաբաժին (%)
1	Հայրիյան Կարեն Սևակիկի	12,6	0,6
2	Սարգսյան Հովիկ Յակովի	11,4	0,5
3	Ներսիսյան Ռոզա Գերասիմի	11,1	0,5
4	Ավանեսյան Ռուդիկ Սոկրատի	9,2	0,4
5	Ավանեսյան Ալբերտ Սերգեյի	8,8	0,4
6	Գրիգորյան Էրիկ Ալիկի	7,0	0,3
7	Պետրոսյան Արսեն Վիտալիի	7,0	0,3
8	Լալայան Սասուն Վազգենի	6,9	0,3
9	Վարդանյան Արմեն	6,7	0,3
10	Աբրահամյան Տամելա Մակիչի	5,6	0,2
11	<i>Ընդամենը ներմուծող 10 սուբյեկտ</i>	<i>86,3</i>	<i>3,8</i>
12	Ընդամենը ներմուծող 203 սուբյեկտ	189,5	8,4
13	Գյուղացիական տնտեսություններ	2060,5	91,6
14	Ընդամենը իրացման ծավալ ԱՀ	2250,0	100,0

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն հայրիյան Կարեն՝ 0.6 տոկոս, Սարգսյան Հովիկ՝ 0.5 տոկոս և Ներսիսյան Ռոզա՝ 0.5 տոկոս, անհատ

ծեռներեցները, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 1.6 տոկոսը: Իսկ եթե այս սուբյեկտների մասնաբաժինը դիտարկենք միայն ներմուծված և իրացված սոխի ծավալի մեջ, ապա վերջիններիս միասնական մասնաբաժինը ներմուծման մեջ կկազմի 18.6 տոկոս:


Այսինքն, սոխի շրջանառության ոլորտի դեպքում էական նշանակություն ունի տեղական արտադրությունը, որը իրականացվում է գյուղացիական տնտեսությունների կողմից: Ոլորտը ունի ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

2.4 Կարտոֆիլ ապրանքային շուկայի կառուցվածքը.

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են տնտեսավարող սուբյեկտների իրացման տեսակարար կշիռները 2018 թվականին ներմուծված, արտադրված և իրացված կարտոֆիլի ընդհանուր ծավալի մեջ: Մասնավորապես՝ համաձայն ձեռք բերված տվյալների նշված ժամանակահատվածում թվով 237 տնտեսավարող սուբյեկտների կողմից ԱՀ տարածք ներմուծվել է 3748.3 տոննա կարտոֆիլ՝ որը կազմում է ոլորտի 45.4 տոկոսը: Մնացած 54.6 տոկոսը կամ 4501.7 տոննան արտադրվել է գյուղացիական տնտեսությունների կողմից (տես գծանկար 6):

Գծանկար 6

Կարտոֆիլի ներմուծման և տեղական արտադրության ծավալները




Համաձայն իրականացրած ուսումնասիրության՝ կարտոֆիլի ներմուծման և իրացման առավել մեծ մասնաբաժին ունեն Ավանեսյան Ալբերտ, Հովսեփյան Վահրամ և Ավանեսյան Ռուդիկ անհատ ձեռներեցները: Վերջիններիս ներմուծման մասնաբաժինները կազմում է համապատասխանաբար 5.4, 4.1 և 4.1 տոկոս:

Դիտարկենք ոլորտի արտադրության կառուցվածքը ըստ շրջանների: Կարտոֆիլի արտադրության կառուցվածքում առաջատար շրջաններն են՝ Ասկերանի շրջան՝ 27.5 տոկոս, Հաղուբի շրջան՝ 23 տոկոս (տես գծանկար 7):

Գծանկար 7

Կարտոֆիլի տեղական արտադրության կառուցվածքը ըստ շրջանների

տոննա



Արցախի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ներմուծված և արտադրված կարտոֆիլի ծավալները ընդունվել են որպես իրացում, որի ընդհանուր ծավալը կազմել է 8 250 տոննա կարտոֆիլ:

Կարտոֆիլի շրջանառության ոլորտի իրացման կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ կարտոֆիլի իրացման ոլորտի կեսից ավելին բաժին է հասնում գյուղացիական տնտեսություններին (տես աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Դիտարկված առաջատար 10 ընկերությունների իրացման ծավալները

Դ/Դ	Սուբյեկտ	Իրացման ծավալ (տոննա)	Մասնաբաժին (%)
1	Ավանեսյան Ալբերտ Սերգեյի	201,7	2,4
2	Հովսեփյան Վահրամ	154,8	1,9
3	Ավանեսյան Ռուդիկ Սոկրատի	153,9	1,9
4	Սմբատյան Արթուր	140,5	1,7
5	Հայրիյան Կարեն Սլավիկի	138,1	1,7
6	Ներսիսյան Ռոզա Գերասիմի	116,4	1,4
7	Սարգսյան Հովիկ Յակովի	108,4	1,3
8	Ջավադյան Գեղամ Յուրիի	100,4	1,2
9	Բաղալյան Սեյրան Ռաֆիկի	97,5	1,2
10	Հովհաննիսյան Հովիկ Վալերիի	76,2	0,9

11	Ընդամենը ներմուծող 10 սուբյեկտ	1287,9	15,6
12	Ընդամենը ներմուծող 237 սուբյեկտ	3847,3	46,6
13	Գյուղացիական տնտեսություններ	4501,7	54,6
14	Ընդամենը իրացման ծավալ ԱՅ	8250,0	100,0

Իրացման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեն Ավանեսյան Ալբերտ` 2.4 տոկոս, Յովսեփյան Վահրամ` 1.9 տոկոս և Ներսիսյան Ռոզա` 1.9 տոկոս, անհատ ձեռներեցները, որոնց ընդհանուր իրացման ծավալը կազմել է ոլորտի 6.2 տոկոսը: Իսկ եթե այս սուբյեկտների մասնաբաժինը դիտարկենք միայն ներմուծված և իրացված կարտոֆիլի ծավալի մեջ, ապա վերջիններիս միասնական մասնաբաժինը ներմուծման մեջ կկազմի 13.6 տոկոս:

Այսինքն, կարտոֆիլի շրջանառության ոլորտը նույնպես ունի ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

3.Բանջարեղենի արտադրությամբ և իրացմամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների շրջանակներում կատարած հարցման արդյունքներ


Իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ Հայաստանի Հանրապետությունից ներմուծվում է հիմնականում ջերմոցային տնտեսությունների կողմից արտադրված բանջարեղեն, իսկ Արցախի Հանրապետությունում ջերմոցային տնտեսությունների կողմից արտադրվում է պահանջարկի մոտ 15 տոկոսը: Այսինքն, Արցախի Հանրապետությունում զարգացման բավականին մեծ ներուժ ունի ջերմոցային տնտեսությունները և ոլորտի զարգացումը հիմնականում պայմանավորված է այս գործունեության խրախուսման հետ:

Այդ իսկ պատճառով Հանձնաժողովը բանջարեղենի արտադրության և իրացման ոլորտում գործունեություն ծավալելու խոչընդոտների բացահայտման, ինչպես նաև մրցակցային իրավիճակի զարգացմանը խոչընդոտող երևույթները բացառելու նպատակով իրականացրել է հարցումներ բանջարեղենի տեսակների արտադրությամբ և իրացմամբ զբաղվող ջերմոցային տնտեսությունների շրջանում:

Հարցվածների կարծիքով Արցախի Հանրապետությունում բանջարեղենի արտադրության ընդլայնման տեսանկյունից հիմնական խնդրահարույց գործոնն է ֆինանսական միջոցների բացակայությունը 55 տոկոսով: Որոշակի ազդեցություն ունեն նաև ներմուծող բանջարեղենի առկայությունը` 15 տոկոս և աշխատուժի բացակայությունը` 13.3 տոկոս (տես գծանկար 7):

Գծանկար 7

Բանջարեղենի արտադրության ընդլայնման տեսանկյունից խնդրահարույց գործոնները




Այսինքն, ոլորտի զարգացումը պայմանավորված է ֆինանսական միջոցների հասանելիությամբ: Հարցումների արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների գերակշռող մասը պատրաստ է ներգրավել մատչելի պայմաններով վարկային միջոցներ՝ գործունեությունը ընդլայնելու համար: Սա նշանակում է, որ գործունեությունը եկամտաբեր է և հեռանկարային:

Պետք է նշել նաև, որ ֆինանսական միջոցների նպատակային և արդյունքվետ բաշխման համար անհրաժեշտ է այն տրամադրել մասնագիտացված և փորձառու գյուղատնտեսներին և կազմակերպություններին, քանի որ ջերմոցային տնտեսությունների շահագործման հաջողությունը մեծապես պայմանավորված է մասնագիտական գիտելիքների առկայությամբ:

Հարցումների միջոցով ուսումնասիրելվել են նաև իրացման վրա ազդող գործոնները: Հարցվածների կարծիքով բանջարեղենի իրացման վրա առաջնային ազդեցություն ունի ապրանքի որակը՝ 58.3 տոկոսով (տես գծանկար 8):

Գծանկար 8

Բանջարեղենի իրացման պայմանների վրա ազդող գործոնները



Սպառողի կողմից որակի նկատմամբ մեծ պահանջատիրությունը տեղական արտադրության զարգացման գրավականն է, քանի որ սպառողը ավելի շատ նախապատվություն տալիս է ապրանքի որակին քան գնին:

Այսինքն, ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ բանջարեղենի արտադրության և իրացման համար Արցախի Հանրապետությունում առկա են նպաստավոր պայմաններ, իսկ ոլորտում հուզող ամենահիմնական խնդիրը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

4. Գին և զնազոյացման մեխանիզմներ:


Ինչպես ցույց է տվել ուսումնասիրության արդյունքները բանջարեղենի շրջանառության ոլորտում դիտարկված ապրանքային շուկաներում բացակայում են գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ, որոնք կարող են միակողմանի ազդեցություն ունենալ շուկաներում ձևավորվող գների կամ այլ պայմանների վրա: Նման պայմաններում գինը ձևավորվում է բացառապես առաջարկի և պահանջարկի հարաբերակցության հիման վրա:

Ի դեպ այս պարագայում մեծ ազդեցություն ունի Հայաստանի Հանրապետությունում առաջարկի առկայությունը, քանի որ բանջարեղենի զգալի մասը ներ է մուծվում և Հայաստանում ձևավորված գները ներմուծող սուբյեկտների համար հադիսանում են որպես ձեռքբերման գին:

Դիտարկենք Արցախի Հանրապետությունում 2018 թվականի ընթացքում ձևավորված ուսումնասիրվող բանջարեղենի տեսակների գները 1 կգ համար (տես գծանկարներ 9-12):


Գծանկար 9

Լոլիկի իրացման միջին գին




Գծանկար 10

Վարունգի իրացման միջին գին




Գծանկար 11

Սոխի իրացման միջին գին



Գծանկար 12

Կարտոֆիլի իրացման միջին գին



Ինչպես երևում է գծանկարներից դիտարկված բանջարեղենի տեսակների գները կրում են սեզոնային բնույթ: Արտադրության ծավալների ավելացման ֆոնին գները նվազում են: Նշվածը բնութագրում է շուկայի մրցակցային վիճակը, երբ գների փոփոխության պատճառը հանդիսանում է օբյեկտիվ գործոն և բացառվում է սուբյեկտիվ ազդեցություն:

Ուսումնասիրության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ներմուծող կազմակերպությունների կողմից կիրառվող գնային քաղաքականությանը: Արդյունքները ցույց են տվել, որ ներմուծող կազմակերպությունների կողմից կիրառվող վրադիրը միջինում կազմում է 15-20 տոկոս, որը փոխհատուցում է տեղափոխման և իրացման ծախսերը, ինչպես նաև ապահովում որոշակի շահութաբերություն:

Արցախի Հանրապետությունում բանջարեղենի շրջանառության ոլորտում 200-ից ավել ներմուծող տնտեսավարող սուբյեկտների մրցակցությունը թույլ է տալիս վրադիրը պահել նման մակարդակում, որից ցածր վրադիրի կիրառումը գործունեությունը կդարձնի ոչ շահութաբեր:

Ինչ վերաբերվում է տեղական արտադրությանը, ապա պետք է նշել որ, Արցախի Հանրապետությունում արտադրված լոլիկի և վարունգի ծավալները չեն գերազանցում ներմուծման ծավալներին, այդ իսկ պատճառով չեն նպաստում գների որոշակի նվազմանը:

Այս շուկաներում տեղական արտադրության ապրանքատեսակները իրացվում է հիմնականում Հայաստանի Հանրապետությունից ներմուծված լուլիկի և վարունգի գներից համապատասխան կամ որոշակի ավելի թանկ՝ հաշվի առնելով տեղական արտադրանքի նկատմամբ ավելի մեծ պահանջարկը:

Հակառակ պատկեր է սոխի և կարտոֆիլի շուկաներում, որտեղ տեղական արտադրության ծավալները որոշակի ժամանակահատվածում բավարարում են շուկայի պահանջարկը: Այստեղ գները հիմնականում ձևավորվում են տեղական արտադրության ծավալների և շուկայի պահանջարկի հարաբերակցության սկզբունքով և իրացվում են ավելի էժան քան Հայաստանի Հանրապետությունում:

5.Որոշ տվյալների անհամապատասխանությունը և ԱՏԳԱԱ ներդրման անհրաժեշտությունը:

Ինչպես արդեն նշվել է տարբեր գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը հնրավորություն չի տվել պարզել առանձին սուբյեկտների արտադրության և իրացման ծավալները: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել է նշված տեղեկատվության հավաքագրումը ԱՀ շրջաններում:

Ստացված տեղեկատվության վերլուծության և Հայաստանի Հանրապետությունում արտադրված և իրացված ուսումնասիրվող ապրանքների 1 շնչի հաշվով համադրության արդյունքում պարզ է դարձել, որ գերատեսչություններից ստացած տեղեկատվությունը հաճախ չէր համապատասխանում իրական պատկերին:

Այսպես, ներմուծման վերաբերյալ ստացված տեղեկատվության շեղումը, ըստ ուսումնասիրության արդյունքների, առանձին ապրանքների մասով կազմում է մինչև գրեթե 7 անգամ (տես աղյուցակ 5):

Աղյուսակ 5

Որոշ տվյալների շեղումների մակարդակը

2018թ.

Ապրանք	Հայաստանի Հանրապետություն			Արցախի Հանրապետություն				
	արտադրություն (տոննա)	իրացում (տոննա)	իրացում 1 շնչի հաշվով (կգ)	իրացում (տոննա)	Արտադրություն (տոննա)	Ներմուծում ըստ ԱՀ ՖՆ (տոննա)	Իրական ներմուծում (տոննա) *4-5	Շեղում (%) ** (7-6)/6
	1	2	3	4	5	6	7*	8**
Լուլիկ	138123,5	104 640,2	34,9	5235,0	2391,3	671,7	2 843,7	323
Վարունգ	50599,3	49 202,4	16,4	2400,0	629,3	400,8	1 770,7	342
Կարտոֆիլ	415050	166 020,0	55,3	8250,0	4501,7	480,2	3 748,3	680
Սոխ	39278,5	43 630,3	14,5	2250,0	5292,6	189,5	189,5***	0

*** Սոխի ներմուծման ծավալը ընդունվել է ի գիտություն, քանի որ ինքնաբավության պայմաններում հնարավոր չէ հաշվարկել ներմուծման իրական ծավալը:

Նշված շեղումների առկայությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն տնտեսավարողների կողմից ներմուծման ծավալների գրանցման ընթացքում իրական

ծավալների թաքցման պատճառով, այլ նաև ուսումնասիրվող ապրանքները «բանջարեղեն» կամ այլ խմբերում գրանցելու հետևանք:

Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության հարկային պետական ծառայության կողմից հաշվառվող ապրանքների խմբերը հաճախ պարունակում են փոխադարձ չփոխարինելի ապրանքներ (օրինակ՝ բանջարեղեն, միրգ, մսամթերք, կաթնամթերք և այլն), որը Հանձնաժողովի կողմից որոշ ապրանքային շուկաների ուսումնասիրությունը դարձնում է անհնարին կամ մոտավոր:

Այս առումով կարևորում ենք ապրանքները դասակարգել ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի (ԱՏԳԱԱ), որը կիրառվում է Հայաստանում և մաքսային միությունում և ներառում է 97 խումբ ապրանքներ իրենց ենթախմբերով:

Նման համակարգի ներդրումը, ներմուծման ծավալների վեահսկումը և գյուղատնտեսական ապրանքների համատարած հաշվառումը հնարավորություն կտա ոլորտային ուսումնասիրությունները կատարել ավելի ճշգրիտ և օբյեկտիվ:

Եզրակացություն

Բանջարեղենի շրջանառության ոլորտում ձևավորված ներկայիս իրավիճակի ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Բանջարեղենի շրջանառության ոլորտի լուրիկ, վարունգ, սոխ և կարտոֆիլ ապրանքային շուկաները ունեն ցածր կենտրոնացվածության աստիճան, որտեղ բացակայում են շուկայի վրա միակողմանի ազդելու հնարավորություն ունեցող, գերիշխող դիրք զբաղեցնող տնտեսավարող սուբյեկտներ:

2. Լուրիկի և վարունգի շրջանառության ոլորտի իրացման կառուցվածքում էական դերակատարություն ունեն ներմուծող տնտեսավարող սուբյեկտները, որոնց առաջատար 3 սուբյեկտների ներմուծման ծավալները միասին ընդհանուր ներմուծման կառուցվածքում չի գերազանցում 30 տոկոսը:

3. Սոխի և կարտոֆիլի շրջանառության ոլորտների իրացման կառուցվածքի դիտարկումները ցույց են տվել, որ կարտոֆիլի իրացման ոլորտի կեսից ավելին, իսկ սոխի իրացման ոլորտը գրեթե ամբողջությամբ բաժին է հասնում գյուղացիական տնտեսություններին:

4. Բանջարեղենի արտադրության և իրացման համար Արցախի Հանրապետությունում առկա են նպաստավոր պայմաններ, իսկ ոլորտում հուզող ամենահիմնական խնդիրը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

5. Գնի և գնագոյացման մեխանիզմների ուսումնասնիությունը ցույց է տվել, որ դիտարկված բանջարեղենի տեսակների գները ձևավորվում են առաջարկի և պահանջարկի հարաբերակցության արդյունքում և կրում են սեզոնային բնույթ: Արտադրության ծավալների ավելացման ֆոնին գները նվազում են: Նշվածը բնութագրում է շուկայի մրցակցային վիճակը, երբ գների փոփոխության պատճառը հանդիսանում է օբյեկտիվ գործոն և բացառվում է սուբյեկտիվ ազդեցություն:

6. Արցախի Հանրապետությունում բանջարեղենի շրջանառության ոլորտում 200-ից ավել ներմուծող տնտեսավարող սուբյեկտների մրցակցությունը թույլ է տալիս վրադիրը

պահել 15-20 տոկոսի մակարդակում, որից ցածր վրադիրի կիրառումը գործունեությունը կդարձնի ոչ շահութաբեր:

7. Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի (ԱՏԳԱԱ) միջոցով դասակարգման համակարգի բացակայությունը, որոշ ապրանքային շուկաների ուսումնասիրությունը դարձնում է անհնարին կամ մոտավոր:

Առաջարկություն

Հիմք ընդունելով բանջարեղենի շրջանառության ոլորտի ուսումնասիրության արդյունքները և կատարած եզրակացությունները առաջարկում են.

1. Բանջարեղենի շրջանառության ոլորտի լուրիկ, վարունգ, սոխ և կարտոֆիլ ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրությունը ներկայացնել առաջիկա նիստում:

2. Ուսումնասիրությունը ամբողջությամբ ընդունել ի գիտություն և ներկայացնել ԱՀ կառավարություն:

ՏՄՊ բաժնի պետ

Ս. Գրիգորյան

Կատարող՝ ՏՄՊ բաժին
19.06.2019թ.